3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սառա Սամսոնի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝


Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հունվարի 08
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2026 թվականի N 0019-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԶՈՐԻԿ ՎԱԶԻՐԻ ԱՄՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Զորիկ Վազիրի Ամոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում Զորիկ Վազիրի Ամոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04312XWUDBQQ, կադ. ծածկագիր՝ 04-095-0063-0005/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Փշատավան բնակավայր, 26-րդ փողոց, 8 բնակելի տուն:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զորիկ Վազիրի Ամոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2026 թվականի N 0020-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԶՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, և հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի բնակիչ Զորիկ Վազիրի Ամոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի, 26-րդ փողոց, 8 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0.11780 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1987 թվականին կառուցված 117,1 ք/մ բնակելի տան նկատմամբ Զորիկ Վազիրի Ամոյանի /ծնված 10.04.1960թ./ և Փարիշան Շիրալիի Բաքոյանի /ծնված 01.08.1962թ./ սեփականության իրավունքը:


2. Առաջարկել Հ.Հ.Կ.Ա. Ա.Գ.Կ. Պ.Կ. համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Զորիկ Վազիրի Ամոյանի /ծնված 10.04.1960թ./ և Փարիշան Շիրալիի Բաքոյանի /ծնված 01.08.1962թ./ սույն որոշման 1-ին կետում նշված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի, 26-րդ փողոց, 8 բնակելի

մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի, 26-րդ փողոց, 8 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0.11780 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1987 թվականին կառուցված 117,1 ք/մ բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. 2020 թվականին կառուցված 1,02 ք/մ պարիսպը համարել որպես ինքնակամ շինություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ձորիկ Վազիրի Ամոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2026 թվականի հունվարի 08
ք. Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2026 թվականի N 0021-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏԻԶԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների աշխատակիցների կողմից 2025 թվականի նոյեմբերի 18-ին Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում կատարված շրջայցի ժամանակ կազմված արձանագրությամբ փաստվել է, որ քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության կառուցվող ձկնաբուծարանի տարածքից իրականացվում էին ավազակոպճային խարնուրդի արդյունահանման և բարձման աշխատանքներ, իսկ հողային հանույթը կուտակվում էր կառուցվող ձկնաբուծարանի կողքին: Արդյունահանված ավազակոպճային խարնուրդը բարձվում և տեղափոխվում էր «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությանը պատկանող բեռնատարների միջոցով, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին պարբերության և 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներ են, մասնավորապես իրականացվում էր հողատարածքի ոչ նպատակային օգտագործում և առանց համապատասխան թույլտվության իրականացվում էին շինարարական աշխատանքներ:

Արձանագրված դեպքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Մեծամորի համայնքապետարանի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովի կողմից 2025 թվականի նոյեմբերի 24-ին հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 08-ին, ժամը 11:30-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանը /ստացական՝ LO130651391AM/, սակայն փոստային անդորրագրի հետադարձ ծանուցումը հանձնաժողովը չէր ստացել: Ելնելով

անհրաժեշտությունից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասին ա/ ենթակետի՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովը գործի քննության նոր օր է նշանակել 2025 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 12:00-ին, որի վերաբերյալ Սարգիս Մկրտիչի Մկրտչյանը կրկին ծանուցվել է, սակայն հետադարձ ծանուցումը «Հայփոստ» ՓԲ ընկերությունից չի ստացվել: Միաժամանակ նշված ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) և ծանուցումը համարվում է հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը: Քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանը կամ նրա ներկայացուցիչը չեն ներկայացել վարչական վարույթով գործի լսմանը:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների աշխատակիցների կողմից 2025 թվականի նոյեմբերի 18-ին Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրում կատարված շրջայցի ժամանակ կազմված պարզվել է, որ քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության, այն է՝ Մեծամոր համայնքի կողմից տրված շինարարության թույլտվությունը ճանաչվել է ուժը կորցրած /2025 թվականի մարտի 12-ին կառուցապատող Սարգիս Մկրտչյանին տրված թիվ ՇԹ/361/3961-25 շինարարության թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Մեծամոր համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1601-Ա որոշում/, կառուցվող ձկնաբուծարանի տարածքից իրականացվում էին ավազակոպճային խարնուրդի արդյունահանման և բարձման աշխատանքներ՝ հողատարածքն օգտագործվում էր ոչ նպատակային նշանակությամբ, իսկ հողային հանույթը կուտակվում էր կառուցվող ձկնաբուծարանի կողքին: Արդյունահանված ավազակոպճային խարնուրդը բարձվում և տեղափոխվում էր «ԿԱՊՈՒՅՏ ԱՎԱԶ» ՍՊ ընկերությանը պատկանող բեռնատարների միջոցով, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին պարբերությունով և 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներ են:

Քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանը չի ներկայացել վարչական վարույթով գործի քննությանը և նրա կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովին չի ներկայացրել:

Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողատարածքում առանց թույլտվության շինարարություն իրականացնելու հետ կապված, իրավախախտման հայտնաբերման պահի դրությամբ առկա չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության վերաբերյալ համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրիսնապատիկից հազարիինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219¹-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին, նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին պարբերությունով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով և 219¹-րդ հոդվածի 4-րդ պարբերությունով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի «բ», 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին պարբերությունով նախատեսված իրավախախտում կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտում կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900335239373 հաշվեհամարին՝ ստացող Մեծամորի համայնքապետարան:

3. Քաղաքացի Սարգիս Մկրտիչի Մկրտչանին տալ պարտադիր ցուցում՝ օրենքով սահմանված կարգով վերացնել վարչական իրավախախտման հետևանքները:


4. Պարզաբանել նաև, որ սույն որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Մեծամոր համայնքի ղեկավարին կամ Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2026 թվականի հունվարի 08
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2026 թվականի N 0022-Ա


ՔԱՂԱՔԱՅԻ ԲԱԴՐ ԱԼԻՅԻ ՈՒՍՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Բադր Ալիյի Ուսոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1. Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրում Բադր Ալիյի Ուսոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04242ALPMSXW, կադ. ծածկագիր՝ 04-075-0151-0005/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայր, 33-րդ փողոց, 15 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բադր Ալիյի Ուսոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հունվարի 08
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2026 թվականի N 0023-Ա

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի N1855-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1. Մեծամոր համայնքի համայնքային սեփականության հողամասի վրա կառուցված Արևիկ բնակավայրի 20-րդ փողոց 8-րդ շենքի / կադաստրային ծածկագիր 04-027-0059-0010/ պահպանման և սպասարկման համար տվյալ շենքի բնակարանների և /կամ/ ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով հատկացնել շենքի պարագծով ինչպես նաև անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը և սալվածքի չափով /մինչև 1.5 մետր լայնությամբ/ հողաշերտը՝ 0,09762 հա չափով՝ համաձայն հողամասի գլխավոր հատակագծի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2026 թվականի հունվարի 08
ք.Մեծամոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունվարի 2026 թվականի N 0024-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սոնա Ռազմիկի Կարապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրում Սոնա Ռազմիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04112VHYG6QH, կադ. ծածկագիր՝ 04-031-0035-0028/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Բամբակաշատ բնակավայր, 13-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 7 հողամաս:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնա Ռազմիկի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ՀՐԱՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունվարի 2026 թվականի N 0025-Ա


ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈՐՅՈՒՆ ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Կորյուն Լավրենտի Հովհաննիսյանի դիմումը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում Կորյուն Լավրենտի Հովհաննիսյանին առուվաճառքի պայմանագրով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 042022GX7HHK, կադ. ծածկագիր՝ 04-070-0126-0021/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նալբանդյան բնակավայր, 3-րդ թաղամասի 7-րդ փողոց, 54 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կորյուն Լավրենտի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունվարի 2026 թվականի N 0026-Ա

ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ


1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի փոփոխված գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Օրենքով սահմանված կարգով ապահովել գնումների պլանի հրապարակայնությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2026 թվականի հունվարի 09
ք.Մեծամոր



ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՐ
(փոփոխություն և լրացում)

Պատվիրատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարան
Ֆինանսավորման աղբյուրը՝ 2026 թվականի համայնքի բյուջե
Ծրագիրը՝ Օրենսդիր, գործադիր մարմիններ
(ըստ բյուջեփայլի ծախսերի գործառական դասակարգման)

Գնման առարկայի		Գնման ձև (ընթացակարգը)	Չափման միավոր	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդամենը ծախսերը (հազ. ՀՀ դրամ)
Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Անվանումը					
1	2	3	4	5	6	7
Ծրագիրը՝ Օրենսդիր, գործադիր մարմիններ						
Բաժին 01, խումբ 1, դաս 1 ծրագիր 51						
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
79111100	իրավաբանական խորհրդատվական ծառայություններ	ԲՄ	դրամ	-	1,00	-
50111180	ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայություններ	ՄԱ	դրամ	998 000,00	1,00	998,00
09311100	էլեկտրականություն	ՄԱ	կՎտ/ժ	70 000 000,00	1,00	70 000,00
64211130	բջջային հեռախոսների ծառայություններ	ՄԱ	դրամ	460 000,00	1,00	460,00
64211230	կազմակերպության ընդհանուր հեռախոսային ծախսի ծառայություններ	ՄԱ	դրամ	500 000,00	1,00	500,00
64211110	տեղային հեռախոսային ծառայություններ	ՄԱ	դրամ	35 100,00	1,00	35,10
64111200	փոստային ծառայություններ՝ կապված նամակների հետ	ՄԱ	դրամ	600 000,00	1,00	600,00
92421100	թերթերում հայտարարությունների տասնյոթամյա ծառայություն	ՄԱ	դրամ	150 000,00	1,00	150,00
48441300	հաշվապահական համակարգչային ծառայություն փաթեթներ	ՄԱ	դրամ	268 000,00	1,00	268,00
75241100	հանրային անվտանգության պաշտպանության ծառայություններ	ՄԱ	դրամ	999 000,00	1,00	999,00
71631120	ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայություններ	ՄԱ	դրամ	100 000,00	1,00	100,00
66511170	փոխադրամիջոցների հետ կապված առանձնակապական ծառայություններ	ՄԱ	դրամ	500 000,00	1,00	500,00
50311250	պատճենահանող սարքերի պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ	990 000,00	1,00	990,00
76131100	գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	200 000,00	1,00	200,00
50891200	էլեկտրական սարքավորումների նորոգում	ՄԱ	դրամ	990 000,00	1,00	990,00
72411700	դրամային անվանումներ	ՄԱ	դրամ	15 000,00	1,00	15,00
80521100	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	ՄԱ	հատ	18 000,00	3,00	54,00
71241200	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ԳՀ	դրամ	-	1,00	-
ԱՊՐԱՆՔՆԵՐ						
09411700	բնական գազ	ՄԱ	մ3	4 000 000,00	1,00	4 000,00
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						

65111100	խմելու ջրի բաշխում	ՄԱ	դրամ	4 500 000,00	1,00	4 500,00
Ծրագիրը՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ						
Բաժին 01, խումբ 3, դաս 3						
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						

72261180	տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	2 640 000,00	1,00	2 640,00
72261160	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	8 472 000,00	1,00	8 472,00

Ծրագիրը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
ԱՊՐԱՆՔՆԵՐ						

39831260	օճառի տարր	ՄԱ	հատ	300,00	19,00	5,70
39812200	կոշիկի փայլեցման միջոցներ	ՄԱ	հատ	260,00	19,00	4,94
39224360	խոզանակ, կոշիկի	ՄԱ	հատ	500,00	19,00	9,50
18311160	գուլպաներ	ՄԱ	գույգ	350,00	19,00	6,65
18311110	վարտիք	ՄԱ	հատ	650,00	19,00	12,35
18341100	շապիկ	ՄԱ	հատ	1 000,00	19,00	19,00
19431610	կարի թել	ՄԱ	հատ	150,00	19,00	2,85
39224530	կարի ասեղներ	ՄԱ	հատ	200,00	19,00	3,80
33741600	եղունգների կծաքցաններ (կտրիչներ)	ՄԱ	հատ	300,00	19,00	5,70
33711730	հիգենիկ պարագաներ	ՄԱ	լրակազմ	600,00	19,00	11,40
33721100	ածելիներ	ՄԱ	հատ	650,00	19,00	12,35
33131140	ատամի խոզանակներ	ՄԱ	հատ	300,00	19,00	5,70
18931120	սպորտային պայուսակներ	ՄԱ	հատ	5 300,00	19,00	100,70
33711480	օճառ	ՄԱ	հատ	400,00	19,00	7,60
39812200	կոշիկի փայլեցման միջոցներ	ՄԱ	հատ	580,00	19,00	11,02
22111200	սպագրված այլ գրքեր	ՄԱ	հատ	3 650,00	19,00	69,35

Ծրագիրը՝ Ոռոգում						
Բաժին 04 խումբ 2 դաս 4 ծրագիր 51						
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						

45241138	շինարարական աշխատանքներ ջրային ուղիների համար	ԳՀ	դրամ	-	1,00	-
----------	---	----	------	---	------	---

ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
71351540	տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-

Ծրագիրը՝ Ճանապարհային տրանսպորտ						
Բաժին 04 խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						

50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-

50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
50531140	փորձաքննության ծառայություններ	ԳՀ	դրամ	-	1,00	-
Ծրագիրը՝ Զրամադակարարում						
Բաժին 06 խումբ 3 դաս 1 ծրագիր 51						
ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
09311100	էլեկտրականություն	ՄԱ	կՎտ/ժ	351 000 000,00	1,00	351 000,00
71241200	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ԳՀ	դրամ	-	1,00	-
Ծրագիրը՝ Փողոցների լուսավորում						

Բաժին 06 խումբ 4 դաս 1 ծրագիր 51					
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
09311100	Էլեկտրականություն	ՄԱ	կՎտ/ժ	42 000 000,00	1,00 42 000,00
Ծրագիրը՝ Մշակույթի փներ, ակումբներ, կենտրոններ					
Բաժին 08 խումբ 2 դաս 3 ծրագիր 51					
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
09311100	Էլեկտրականություն	ՄԱ	կՎտ/ժ	22 000 000,00	1,00 22 000,00
ԱՊՐԱՆՔՆԵՐ					
Ծրագիրը՝ Այլ մշակութային կազմակերպություններ					
Բաժին 08 խումբ 2 դաս 4 ծրագիր 51					
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
55521400	ճաշկերպությունների կազմակերպում	ՄԱ	դրամ	600 000,00	1,00 600,00
Ծրագիրը՝ Նախադպրոցական կրթություն					
Բաժին 09 խումբ 1 դաս 1 ծրագիր 51					
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
71241200	Նախագծերի պատրաստում, ծախսերի օժանդակում	ԳՀ	դրամ	-	1,00 -
ԱՊՐԱՆՔՆԵՐ					
15811100	հաց	ԳՀ	կգ	-	1 412,00 -
15898100	փխրեցուցիչ	ԳՀ	կգ	-	11,20 -
15872600	կերակրի սողա	ԳՀ	կգ	-	32,40 -
03222126	ազնվամորի	ԳՀ	կգ	-	1 142,20 -
03222126	ազնվամորի	ԳՀ	կգ	-	1 142,20 -
03222123	հաղարջ	ԳՀ	կգ	-	1 142,20 -
15871257	համեմունքներ	ԳՀ	կգ	-	10,50 -
15871257	համեմունքներ	ԳՀ	կգ	-	4,00 -
15871257	չորահաց	ԳՀ	կգ	-	89,20 -
15871257	համեմունքներ	ԳՀ	կգ	-	4,90 -
ԸՆԴԱՄԵՆԸ՝					512 359,71



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունվարի 2026 թվականի N 0027-Ա


ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ԱՐՐԱՀԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Աբրահամի Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրում Հասմիկ Աբրահամի Վարդանյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 042126EWAWGG, կադ. ծածկագիր՝ 04-071-0042-0009/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նոր Արմավիր բնակավայր, 8-րդ փողոց, 23 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Աբրահամի Վարդանյանի որոշման ընդունման մասին իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունվարի 2026 թվականի N 0028-Ա


ՔԱՂԱՔԱՑԻ ԵՐՎԱՆԴ ՀԱՅԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Երվանդ Հայկի Թորոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում Երվանդ Հայկի Թորոսյանին առուվաճառքի պայմանագրով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04202V9AKQWD, կադ. ծածկագիր՝ 04-070-0006-0017/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նալբանդյան բնակավայր, 1-ին թաղամասի 10-րդ փողոց, 19 հողամաս:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երվանդ Հայկի Թորոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հունվարի 12
ք.Մեծամոր